# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**23 նոյեմբերի 2016 թվականի N 208-Ա**

### «ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) ենթակետով և հիմք ընդունելով <<Սիսիանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ս.Իսախանյանի անձնական դիմումը, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2016թ. նոյեմբերի 24-ից լուծել <<Սիսիանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սվետլանա Իսախանյանի հետ 2015թվականի հունիսի 10-ին կնքված N 6 աշխատանքային պայմանագիրը և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

2. 2016թ. նոյեմբերի 24--ից <<Սիսիանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել ընկերության ընտանեկան բժիշկ Իրինա Զիլֆուղարյանին մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝ Ի. Զիլֆուղարյանի անձնական դիմումը:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Գևորգյան Նունե | մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ ) |
| Դավթյան Սուսաննա | մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Ասրյան Աշոտ | մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Թադևոսյան Արմեն | մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |
| Իսախանյան Սվետլանա | << Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ նախկին տնօրեն, հանձնող |
| Զիլֆուղարյան Իրինա | << Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող: |

4.Հանձնաժողովին գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել [illegible]:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Վ.ՀԱԿՈԲՅԱՆ**

*2016թ.նոյեմբերի 23*
*ք. Կապան*